ԳԱՀԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԱՇՈՏ Գ-Ի ՕՐՈՔ

ՌԱՖԱՅԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ֆեոդալական պետության վարչական համակարգի կարևոր և հետաքրքիր հատկանիշներից էր գահակցությունը, որպես գերագույն իշխանությունը իրագործելու եղանակներից մեկը։ Այդ ինստիտուտի միջոցով իշխող դինաստիան ու նրա արքունիքը ձգտում էին կանխել գահակալական պայքարը։ Միջնադարում գահակցությունն իրագործվել է եվրոպական երկրներում, Ռուսաստանում և այլուր։ Բացառություն չէր կարող կազմել նաև միջնադարյան Հայաստանը, առավել ևս, որ գահակցությունն իրագործվում էր Կիլիկյան հայկական պետության վարչակարգում[1]։ Մինչև այժմ հայկական ֆեոդալիզմի պատմությանը, մասնավորապես Բագրատունյաց շրջանին նվիրված պատմագիտական հետազոտություններում գահակցության մասին գրեթե ոչինչ չի ասվել։ Այնինչ IX—XI դդ. իշխող դինաստիայի վերնախավի ներկայացուցիչների միջև փոխհարաբերություններն այնպիսին էին, որ արքունիքը չէր կարող անտեսել գահակցությունը, որպես կենտրոնական իշխանության ամրապնդման գործիք։ Այդ շրջանում ֆեոդալական հողատիրությունը կրել էր արմատական փոփոխություններ՝ նախարարականից վերածվելով անհատական-սեփականատիրականի (բաժնեկալվածքայինի)[2]։ Ներքաղաքական կյանքում դա արտացոլվում էր այն բանում, որ հաճախ գերագույն իշխանության հարցը փորձում էին լուծել մայրատի սկզբունքով։ Հիշենք գահակալական պայքարը Բագրատունյաց պետության սկզբնական շրջանում՝ Սմբատ Ա-ի և սպարապետ Աբասի, Աշոտ Բ-ի և Աշոտ Շապուհյանի միջև։ Այդ պայքարը ոչ միայն թուլացնում էր նորաստեղծ պետականությունը, այլև ճարպկորեն օգտագործվում էր արտաքին թշնամիների կողմից։

Պետականության վերականգնումից հետո, դեռ Աշոտ Ա-ի ժամանակ, ստեղծվել էր կառավարիչ-պաշտոնյաների ապարատ, որը հեռու էր կենտրոնացված լինելուց և ժամանակի ընթացքում պետք է կատարելագործվեր։ Աշոտի անմիջական հաջորդների օրոք, X դ. առաջին երեսնամյակի խառնակ վիճակը՝ լարված պայքարն անկախությունը պահպանելու համար, հնարավորություն չէր տալիս կենտրոնացնելու այդ ապարատը։ Բայց X դ. կեսերին արդեն հնարավոր էր և անհրաժեշտ ուշադրությունը կենտրոնացնել ներքին խնդիրների վրա։ Հին վարչական համակարգը չէր բավարարում ժամանակի պահանջները։ Անհրաժեշտ էին արմատական վերափոխումներ, որոնց արքունիքը ձեռնամուխ եղավ Աշոտ Գ-ի օրոք։ Այդ ժամանակից սկսած իրա-

---

1 Ս. Բոռանոյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում, Երևան, 1973, էջ 172։

2 С. Еремян, Опыт периодизации истории Армении эпохи феодализма («Вопросы истории», 1951, № 7, стр. 57, 60), Հ. Թումանյան, Հայաստանի տնտեսական զարգացման պատմություն, Երևան, 1960, էջ 105։

գործվեցին մի շարք միջոցառումներ ինչպես կենտրոնում, այնպես էլ տեղերում։ Դրանցից ամենադլխավորն էր մշտական մայրաքաղաքի ընտրությունը։ Լեոն Բագրատունյաց պետության երկրորդ շրջանը, սկսած 961 թ., անվանում է «Անիական շրջան»[3] և նա իրավացի է։ Այդ ժամանակվանից ի վեր, գրեթե մեկ դար, Անին երկրի մշտական քաղաքական կենտրոնն էր[4]։ Գրեթե միաժամանակ կաթողիկոսարանը հաստատվեց Շիրակում՝ արքունիքի մոտ։ Վարչական ապարատի վերափոխումը և կատարելագործումը մի ամբողջական պրոբլեմ է, որը պահանջում է հատուկ հետազոտություն[5]։

Բագրատունյաց թագավորության շրջանից գահակցության մասին առաջին տեղեկությունները վերաբերում են Աշոտ Գ-ի իշխանության տարիներին։ Աշոտ Գ-ին ժամանակակից երկու անձնավորություններ՝ կաթողիկոս Անանիա Մոկացին և Սանահնի վանքի քարտուղար Սիմեոնը մատնանշում են, որ թագավորի ավագ որդի Սմբատը գահակից էր հորը։ Կաթողիկոսը իր հայտնի թղթում հաղորդում է, որ 958 թ. խոտակերաց վանքի վանական Դավիթը եկել է Շիրակ և Շիրակավանում հանդիպել «Հայոց թագավոր» Սմբատի հետ[6]։ Իսկ Սիմեոնը 972 թ. Սանահնի վանքի գրառումների մատյանում (Քոթուկ) վանքի կառուցման կապակցությամբ (966 թ.) գրել է մի հիշատակարան և հիշատակել վանքի կառուցմանը մասնակից և հովանավորող բոլոր աշխարհիկ ու հոգևոր անձանց։ Ի թիվս այլոց, երկու անգամ հիշատակված է նաև Սմբատը («քաջ շինաւղն Հայոց թագաւորն Սմբատ» և մյուսը՝ «թագաւորութիւն Աշոտոյ և նորին որդւոյ Սմբատայ քաջք և յաղթողք թագաւորք Հայոց»)[7]։ Այս գրություններում անընկմիտ նշված է Սմբատի թագավորությունը մինչև նրա գահակալությունը, որը տեղի էր ունեցել 977 թ.։ Այդ առումով առավել հետաքրքիր է Սիմեոնի հիշատակարանը, ուր հայր և որդի միասին անվանված են թագավոր։ Այս հանգամանքը դեռ առաջներում Ղ. Մովսեսյանին իրավունք է տվել իրավացիորեն Սմբատին դիտելու գահակից[8], բայց նա չի քննել բուն նյութը, այլ բավարարվել է միայն փաստը նշելով։

Կան այլ կռվաններ ևս, որոնք հավաստում են Սմբատի գահակցությունը։ 966 թ. կառուցված Սանահնի Ամենափրկիչ եկեղեցին քանդակազարդ է։ Բարձրաքանդակում պատկերված են Աշոտ Գ-ի որդիները՝ Սմբատն ու Գուրգենը, երկուսն էլ թագակիր, իսկ նրանց գլխավերևում գրված է. «Կիւրիկէ թագաւոր, Սմբատ թագաւոր»[9]։ Կյուրիկեն՝ նույն Գուրգենն է, Բագրատունյաց

---

3 Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, էջ 578։

4 Մինչ այդ յուրաքանչյուր նոր թագավոր մայրաքաղաք էր դարձնում իր տիրույթների կենտրոնը։ Այդ պատճառով ամեն անգամ պետության մայրաքաղաքը տեղափոխվում էր տարբեր վայրեր։ Դա շատ էր դժվարացնում երկրի համախմբումը մեկ համազգային կենտրոնի շուրջը։

5 Այդ հարցի մասին կան միայն ընդհանուր բնույթի դիտողություններ (Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, Երևան, 1939, էջ 229—237, Հ. Հարությունյան, Հայաստանը 9—11-րդ դդ., Երևան, 1959, էջ 199—206)։

6 «Արարատ», 1897, թիվ Գ., էջ 144։

7 Մատենադարան, ձեռ. № 30—31, թ. 38—39։

8 Ղ. Մովսեսյան, Լոռիի Կյուրիկյան թագավորների պատմությունը, Վիեննա, 1923, էջ 24։

9 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 98, О. Халпахчян, Санаин, М., 1973, стр. 30, рис. 29—30. Մեր նախորդ հոդվածներում Ամենափրկիչ եկեղեցու կառուցման ժամանակը նշել ենք ոչ թե 966 թ., այլ 972 թ. («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 201, ՀՍՍՀ ԳԱ «Էրեբեր», 1976, № 3։

Լոռվա ճյուղի հիմնադիրը։ Մինչև այժմ մասնագիտական գրականության մեջ միայն բացատրվել է քանդակների անձերի ով լինելը, բայց կարևորություն չի տրվել այն հանգամանքին, որ 966 թ. Սմբատը գեռ Հայոց թագավոր չէր և չի բացատրվել, թե ինչո՞ւ է նրա պատկերը կրող եկեղեցին գտնվում տեղական կառավարիչ-թագավոր ունեցող մարզում։ Արդյո՞ք բարձրաքանդակը սովորական ընտանեկան պատկեր է, թե՞ առնչվում է Տաշիրի վարչական իշխանության հետ։

Հայտնի է, որ Տաշիր-Զորափորը IX դ. վերջից պատկանում էր Բագրատունիների Շիրակի ճյուղին, և մինչև Լոռվա թագավորության կազմավորումն արքունիքը այնտեղ նշանակում էր վերակացուներ։ Արևելյան Գուգարքի գավառները Կյուրիկյանների իրավասության տակ դնելով՝ արքունիքը նրանց համար կառուցեց նաև տոհմական հոգևոր կենտրոններ՝ Սանահնի ու Հաղբատի վանքերը, որոնք նվիրվեցին Աշոտ Գ-ի որդիների «արևշատությանը»[10]։ Այդ ժամանակ վանքերի հիմնադրման և եկեղեցական թեմի կազմավորման ընդհանուր վերահսկողը հայոց թագուհի խոսրովանույշն էր[11], իսկ տեղում միջոցառումներն իրագործում էին Սմբատն ու Գուրգենը։ Սմբատի մասնակցությունը հաստատում է Սիմեոնը («զարի և քաջ շինաւղն Հայոց թագաւորն Սմբատ»), իսկ Գուրգենի մասին տեղեկություն կա ավելի ուշ շրջանից[12]։ Վերջինիս առնչությունն արքունիքի վերափոխումներին ինքնին հասկանալի է. նա ճանաչված էր Լոռվա (կամ Տաշիր-Զորափորի) թագավոր, իսկ Սմբատինը՝ թերևս բացատրվի նրանով, որ նորաստեղծ ֆեոդալական կազմավորման վարչական ապարատում տեղական թագավորի հետ նա որոշ մասնակցություն ուներ։ Ներկա դեպքում նա կարող էր իրագործել կենտրոնական իշխանության վերահսկողությունը Գուգարքի արևելյան գավառներում, որպես թագաժառանգ և արքունիքի ներկայացուցիչ։ Դա կնշանակեր, որ որպես թագաժառանգ նա գործուն մասնակցություն էր ունենում երկրի կառավարմանը և իր հոր՝ հայոց թագավորի, ներկայացուցիչն էր Լոռիում (գուցե և այլ մարզերում)։ Այդ դեպքում տեղական թագավորը (Գուրգենը) արքունիքին ենթարկվում էր թագաժառանգի միջոցով։ Նման վիճակը կարող էր տևել մինչև 977 թ.՝ Սմբատի հայոց թագավոր դառնալը։ Դրանից երկու տարի անց նա, արդեն որպես շահնշահ, այցելել է Սանահին։ Այդ այցը սովորաբար բացատրվում է Սանահնում եկեղեցական վիճակ հիմնելու և եղբորը Լոռվա թագավոր հռչակելու պարագայով[13] (հիմք ունենալով իր իսկ հրովարտակը, որը ընդօրինակվել է Քոթուկում)։ Մենք արդեն ցույց ենք տվել այդ տեսակետի

էջ 88)։ Սակայն, Սիմեոնի հիշատակարանը գրվել է 972 թ.՝ եկեղեցու կառուցումից 6 տարի անց (հմմտ. Մատենադարան, ձեռ. № 3031, թ. 37—38)։

10 «Ցաւուրս սորա (Աշոտ Գ-ի—Ռ. Մ.), և ի Նժդ (966) թվականին, ի Սևորդիսն շինեցան Հաղբատ և Սանահինն... շինեաց կինն Աշոտոյ Խոսրովանոյշ... վասն արևշատութեան որդոց իւրեանց՝ Գուրգենայ, Սմբատայ և Գագկայ» («Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», հ. II, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1958, էջ 501։ «Ի Նխ (991) թվականութեանս Սիմեոն հայր եւ Տիրանուն երեց շինեցաք զեկեղեցիս (Ս. Նշան—Ռ. Մ.), փրկութեան Սիբատա եւ Գուրգենա», Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 141—142։

11 Դա հաստատում է նաև Սիմեոնը. «...ի թուականութեան հայոց ՆԻԱ (972) ի նորաշէն վանքս կոչեցեալ Սանահին... զոր շինեաց բարեպաշտ թագուհին Խոսրովանոյշ. ամուսինն Աշոտոյ Հայոց շահնշահի...», Մատենադարան, ձեռ. № 3031, թ. 37—38։

12 Նույն տեղում, թ. 57։

13 Ղ. Մովսեսյան, նշվ. աշխ., էջ 26։

սխալ լինելը։ Ինչպես վիճակը, այնպես էլ թագավորությունը Տաշիրում կային 979 թ. շատ ավելի շուտ[14]։ Բայց 979 թ. գրած հրովարտակում Սմբատը հայտարարում է, որ ինքը Սանահնի աթոռանիստ վանքի հոգևոր իշխանությանը ենթարկում է «ամենայն երկիրն Տաշրաց» (այն է՝ Լոռվա թագավորությունը) «յոլով գեղորէիւք և հայրենեօք՝ սարով և ձորով»[15]։

Այս հրովարտակը որպես սկզբնաղբյուր օգտագործել են մի շարք հետազոտողներ, որոնք ուսումնասիրել են զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները, մասնավորապես եկեղեցական հողատիրության ինստիտուտը։ Նրանք բոլորն էլ Սմբատի հրովարտակը հասկացել են այն իմաստով, որ թագավորը Սանահնի վանքին նվիրել է ամբողջ «Տաշիր երկիրը» իր գյուղերով, սարերով ու ձորերով, այսինքն՝ այս վավերագիրը դիտել են կալվածագիր[16]։ Բայց իրականում այդպես չէ. հրովարտակում նշված գավառները կազմում էին Լոռվա թագավորության տարածքը։ Հետևաբար, եթե դրանք նվիրվեին վանքին, ապա Լոռվա թագավորին ոչինչ չէր մնա, և թագավորությունը ընդհանրապես գոյություն չէր ունենա։ Որքան էլ առատաձեռն լինեին աշխարհիկ ֆեոդալները, նրանք կարող էին աթոռանիստ վանքին նվիրել ամենաշատը մեկ տասնյակ գյուղ, և դա էլ մեծ նվիրատվություն կլիներ։ Այսպես, օրինակ, 906 թ. Տաթևի վանքին Սմբատ Ա-ն և Սյունիքի իշխանները նվիրել են 17 գյուղ և ավան[17]։ 979 թ. հետո Սանահնի վանքին տարբեր անձինք զանազան նվիրատվություններ են կատարել։ Դա բոլորովին ավելորդ կլիներ, եթե վանքը թագավորից ստանար երկրամասի բոլոր գյուղերը։ Միաժամանակ, Սմբատի սիգելը ցույց է տալիս, որ Լոռվա թագավորության գավառները ենթակա էին հայոց թագավորի գերագույն իշխանությանը։ Միայն այդ դեպքում նա, և ոչ թե տեղական թագավորը, կարող էր տեղական եկեղեցական թեմի իրավասության տակ դնել երկրամասի գյուղերը և կալվածքները։ Այսպիսով, միանգամայն հասկանալի է, թե ինչու 991 թ. ավարտված Հաղբատի ս. Նշան եկեղեցու բարձրաքանդակները պատկերում են նույն զույգը (Գուրգենին և Սմբատին), որ տեսանք Սանահնում. միայն թե Սմբատն այստեղ որպես շահնշահ արքայական զգեստով է (շալմայով և խալաթով)։ Նրանք պատկերված են միասին, որովհետև վանքի և նրա հողերի գերագույն սեփականատերը մնում էր հայոց թագավորը (այն է՝ Բագրատունիների Շիրակի տոհմաճյուղը)։

Բայց Սմբատը միայն եկեղեցական վիճակով չէր զբաղվել Սանահնում։ Քանի որ նա այդ ժամանակ արդեն ստանձնել էր Հայոց թագավորությունը, ապա Տաշիրում ունեցած իր վարչական ֆունկցիաները կամ պետք է հանձնարարեր տեղական կառավարչին կամ իր փոխարեն նշանակեր մեկ ուրիշին և դա ձևակերպեր համապատասխան պաշտոնական կարգով։ Այդ է եղել, մեր կարծիքով, նրա այցի բուն նպատակը։ Սմբատը Սանահին էր եկել նախ ճա-

14 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1976, № 3, էջ 86—95։

15 Մատենադարան, ձեռ. № 3031, թ. 49, Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը, էջ 190—191։

16 Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հ. 2, Երևան, 1964, էջ 50, Լ. Բաբայան, Ակնարկներ միջնադարյան Հայաստանի պատմությունից, Երևան, 1966, էջ 17։

17 Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 18։ Ս. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 156, «Պատմութիւն նահանգին Սիսական՝ արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 228—230։

նաչելու Գուրգենի իրավունքները՝ որպես Լոռվա թագավորի (ինվեստիտուրա շնորհելու)։ Քանի որ փաստեր չկան իր փոխարեն ուրիշին Լոռիում արքունիքի ներկայացուցիչ նշանակելու մասին, հետևապես կարող ենք եզրակացնել, որ 979 թ. նա իր ֆունկցիաները հանձնել է եղբորը։

Հենց այդ իմաստով պետք է հասկանալ պատմագիր Վարդանի խոսքերը Գուրգենի ժառանգության մասին. «Հանգեան ի Քրիստոս (Աշոտ Ողորմածն ու խոսրովանոյշը) ի չորեքհարիւր քսան և հինգ թուին, թողլով երիս որդիս, զՍմբատ, զԳագիկ և զԳուրգէն. որ և ի նմին աւուր առնու զթագն երէց որդին Սմբատ... և կրտսեր եղբայրն ժառանգէ զՏաշիր Սևորդուվքն Զորոյգետին...»[18]։ Որոշ պատմաբաններ այս վկայությունը հասկացել են այլ կերպ և կարծել, թե խոսքը վերաբերում է Կյուրիկյան թագավորության հիմնադրմանը Սմբատ Բ-ի օրոք[19], որ ճիշտ չէ։ Իրականում Վարդանը պարզապես արձանագրել է այն կարգը, ըստ որի Աշոտի հետնորդները բաժանել են հոր ժառանգությունը։ Յուրաքանչյուրը ստացել է իր հասանելիքը, ավագը՝ թագն ու հայոց գահը, կրտսերը՝ վարչական իշխանությունը Տաշիր-Զորոփորոսմ։ Սմբատի գահակալությունը նախապես որոշված է եղել, քանի որ նա դեռ հոր օրոք թագաժառանգ էր և գահակից։

XII դ. կազմված «ժամանակագրությունը» հաստատում է, որ Աշոտի երեք որդիները փոխադարձ համաձայնությամբ են լուծել իշխանության հարցը, ավագին ճանաչելով թագավոր. «Իսկ սոքա համակամ սիրով երիս բաժանեն զթագաւորութիւնն՝ հայրագլուխ առնելով զՍմբատ, և Գուրգէն տիրէ Գոգարացւոց կողմանս...»[20]։

Այս տողերը վկայում են, որ եղբայրները չեն վիճարկել Սմբատի գահակալական իրավունքները, նրան դիտելով օրինական թագաժառանգ, այլ մնացել են «արքունի տան գահերեցներ», իսկ Սմբատին ճանաչել «հայրագլուխ», ֆեոդալական աստիճանակարգի ավագ՝ գերագույն սյուզերեն։

Այսպիսով, մինչև 979 թ. Լոռիում իշխանությունը կենտրոնացած էր երկու կառավարիչների՝ տեղական թագավորի և թագաժառանգի ձեռքում։ Արդյո՞ք հետագայում այստեղ կիրառվել է նման վարչաձև, դժվար է ասել։ Բայց մի ուշագրավ փաստ կա Գագիկ Ա-ի շրջանից։ Հաղբատում փոքր գավթի արձանագրություններից մեկը, ցավոք, անթվական, գրվել է «ի թագաւորութեանս Գուրգենա և Գագկա»[21]։ Արդյո՞ք դա չի նշանակում, որ Գագիկ շահրնշահը նույնպես մասնակից էր Լոռվա թագավորության տեղական կառավարչությանը։ Եթե այս ենթադրությունը ճիշտ է, ապա կարելի է այլ կերպ մեկնաբանել 1001 թ. նրա ընդհարումը Դավիթ Անհողինի հետ։ Մեզանում դա բացատրվում է վերջինիս անջատվողական նկրտումներով և ինքնուրույնություն ձեռք բերելու ձգտումով[22]։ Այդպիսի բացատրությունը համոզիչ չէ այն պարզ պատճառով, որ Լոռվա թագավորությունը սահմանակից էր ուժեղ և թշնամի Գանձակի ու Դվինի Շադդադյան, Տփղիսի արաբական ամիրայություններին։ Անջատվել Անիի շահնշահերից, նշանակում էր զրկվել նրանց

---

18 «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 90։

19 Մ. Չամչյան, Պատմություն Հայոց ի սկզբանե աշխարհի մինչև ցամ տեառն 1784, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 851, Ղ. Մովսեսյան, նշվ. աշխ., էջ 21—22։

20 «Մանր ժամանակագրություններ», հ. II, էջ 501։

21 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 199։

22 Լեո, նշվ. աշխ., էջ 612, Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 119։

պաշտպանությունից և սեփական երկիրը դնել հարվածի տակ։ Ավելի հավանական է ենթադրել, որ վերոհիշյալ ընդհարումը տեղի էր ունեցել Լոռվա թագավորության կառավարչությունում Գագիկի ունեցած իրավունքների և Կյուրիկյանների ներքին գործերին դրանից բխող նրա միջամտության հետևանքով։ Իհարկե, այս կարծիքը պահանջում է լրացուցիչ հիմնավորում, բայց բերված արձանագրության վկայությունն ինքնին շատ ուշագրավ է։

Գահակցության ինստիտուտն Աշոտ Գ-ի ներքին քաղաքականության կարևոր միջոցառումներից էր, որը դրական արդյունքներ տվեց։ Դրա շնորհիվ Սմբատի իրավունքների ճանաչումը տեղի ունեցավ ըստ նախապես սահմանված կարգի, առանց թագավորի մերձավորների գահակալական հավակնությունների։ Հետագա տասնամյակներում, մինչև Բագրատունյաց թագավորության անկումը, այդ ինստիտուտի զարգացման հարցը կարոտ է հատուկ քննության։ Անկասկած, այդ ինստիտուտի կիրառումը հանդիպել է խոչընդոտների, որոնք բարդացրել են դրա իրագործումը։ Այդ է վկայում գահակալական պայքարը Գագիկ Ա-ի ժառանգների միջև։ Այնուհանդերձ, գնահատելի են Բագրատունյաց արքունիքի այն միջոցառումները, որոնց նպատակն էր կատարելագործել և ամրապնդել պետական վարչական ապարատը։ Այդ միջոցառումները սկսվեցին Աշոտ Գ-ի ժամանակ և շարունակվեցին Գագիկ Ա-ի օրոք։

ИНСТИТУТ СОПРАВИТЕЛЬСТВА ПРИ АШОТЕ III

РАФАЕЛ МАТЕВОСЯН

Резюме

При Ашоте III (953—977) Багратидский двор провел ряд реформ, направленных на укрепление центрального и местного административного аппарата. В частности, был введен институт соправительства. Соправителем Ашота стал его старший сын Смбат, будущий царь Смбаг II (977—990), который осуществлял контроль центральной власти в Лорийском царстве.

Фактически до 979 г. верховная власть здесь находилась в руках двух правителей—местного царя (Гургена) и Смбата как представителя армянского царя и его соправителя.